ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ , Խոյ համայնք , գյուղ Գեղակերտ

17 փետրվարի 2025 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ

2025 թվականի փետրվարի 17-ին, ժամը 14:30-ին, ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրի դպրոցում տեղի ունեցավ հանրային 2-րդ լսումը՝ Խոյ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման նպատակով:

Հանրային քննարկմանը ներկա էին «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի աշխատակազմը, Խոյ համայնքի ավագանու անդամները, Խոյի համայնքապետարանի աշխատակազմի ոլորտային ներկայացուցիչները, ինպես նաև մեծ թվով բնակիչներ: Մուտքի խոսքով հանդես եկան «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Նաիրա Առաքելյանը, Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, տուրիզմի, սպասարկման բաժնի պետ Անի Սարգսյանը, այնուհետև խոսքը փոխանցվեց ՀԿ-ի աշխատակից Անի Թովմասյանին, ով մանրամասն ներկայացրեց 2025 թվականի մասնակցային բյուջետավորման ողջ գործընթացը, մասնակցային բյուջետավորման մոդելի հիմնական սկզբունքները, Խոյ համայնքում ներկայացված և ընտրված ծրագրային առաջարկները, համայնքապետարանի կայքում գրանցման և քվեարկության գործընթացը: Արձանագրվեց, որ Խոյ համայնքում ստացվել է 8 հետաքրքիր և արդիական առաջարկ: Առաջարկների հեղինակները ներկայացրեցին իրենց ծրագրային առաջարկները, այնուհետև պատասխանեցին դրանց վերաբերյալ բնակիչներին հուզող հարցերին: Հայտարարվեց, որ քվեարկության փուլը կմեկնարկի շուտով:

Եղան մտքերի փոխանակություն:

Հանրային քննարկման ընթացքում բնակիչները ողջունեցին ներկայացված առաջարկները և խոստացան, որ մեծ ակտիվությամբ կմասնակցեն քվերակությանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Գրապիոն Շառոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թադևոսյան